ՀՈՒՆՎԱՐ ՓԵՏՐՎԱՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ | 2021

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հունվարից փետվար ամիսների անցուդարձի մասին:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում, իր գրասենյակի տարածքում հյուրընկալեց EU4Youth շրջանավարտների ցանցի «Գաղափարների լաբորատորիա» հայաստանյան մեկօրյա միջոցառումը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճարովի աշխատանքային պրակտիկա ծրագիրն իրականացվում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳԻՐ



«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ «Կյանքի հիմնարար հմտություններ դեռահասների համար» ծրագրի երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացման քառօրյա դասընթաց։

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ» ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ

«Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոնում մեկնարկեց «Հոգատարություն հանուն հավասարության» խորագրով ծնողավարության դասընթացների շարքը։ Դասընթացներին մասնակցում են Շիրակի մարզի 18-40 տարեկան երիտասարդ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ։

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԱՐՇԱՎ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած՝ այս տարվա առաջին ճանաչողական արշավը։

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

CITIES OF YOUTH

Տեղի ունեցավ «Երիտասարդների քաղաք» ծրագրի յոթերորդ թեմատիկ քոուչինգը Գյումրիում: Քոուչինգի թեման էր՝ ձեռնարկատիրություն. ով է գործարարը, ինչպես առաջխաղացնել պրոդուկտը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Հայաստանի քոուչինգների մասնակիցները հանդիպում ունեցան «Բեռլին ԱՐՏ հոտելի» տնօրեն Ալեքսան Տեր-Մինասյանի հետ: Հանդիպման ընթացքում Տեր-Մինասյանը ներկայացրեց իր անցած ուղու պատմությունը և պատասխանեց երիտասարդների հարցերին: Հանդիպման ավարտին տեղի ունեցավ շրջայց հյուրանոցի տարածքով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Գյումրու երիտասարդների տուն

Հունվարի 16-ին և 17-ին «Գյումրու երիտասարդների տան» թիմը մասնակցեց Երևանում կայացած Մ18 ծրագրին, որի նպատակն է ապագա ընտրողներին ծանոթացնել ընտրական ինստիտուտին՝ ոչ ֆորմալ կրթության, դերային խաղերի միջոցով, որի վերապատրաստումների արդյունքում ծրագրում ներառված համակարգողները և իրենց թիմերը անցկացնելու են երիտասարդական ընտրություններ մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների համար:

Կարևորելով 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների շրջանում որպես ապագա ընտրողներ՝ ճիշտ կողմնորոշման և որոշումների կայացման հմտությունների զարգացումը, հունվարի 27-ին «Գյումրու երիտասարդների տանն» անցկացվեց «Երիտասարդական ընտրություններ մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների համար» ծրագիրը:

«Հայոց բանակ» թեմատիկ շաբաթվա շրջանակներում կենտրոնում հյուրընկալել էինք Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության ակումբի

հիմնադիր, տանկիստ Տիգրան Աբգարյանի եղբայր Ժորա Աբգարյանին և ակումբի անդամներից մի քանիսին, ովքեր հանդիպում ունեցան կենտրոնի սաների հետ:

Փետրվարի 9-ին և 10-ին «Գյումրու երիտասարդների տան» երիտասարդական աշխատողներ Մարիամ Հակոբյանն ու Անժելա Ջանոյանը մասնակցեցին սոցիալական աշխատողների երկօրյա վերապատրաստման «2020 թ.-ի Արցախյան երկրորդ պատերազմի պատճառով խոցելիություն ձեռք բերած անձանց և ընտանիքների հետ սոցիալական աշխատանքի պրակտիկ հմտություններ» թեմայով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ